տարօրինակ հագուստներով, ինչ-որ լեզուներով խօսում էին եւ ստորերի նման անհետանում: Ասլանը ինձ մօտ ոչինչ չէր խօսում, նրա այդ ծածկամտութիւնը վրդովեցնում էր ինձ. երեւի նա դեռեւս իմ վրայ հաւատ չունէր:

Վարպետ Փանոսի տունը շատ նպաստաւոր էր Ասլանի համար ամէն տեսակ անձանց հետ տեսնուելու. այնտեղ ով ասէք՝ չէր մտնում. նրա գործարանի առիթով, ամէն օր, շրջակայքից բազմաթիւ մարդիկ էին գալիս ու գնում: Իսկ նրա բժշկութիւնը ամէն կասկած փարատում էր. բժիշկը ամէն տեսակ անձինք իր մօտ ընդունելու իրաւունք ունի: Նրա մօտ գալիս էին հիւանդներ, կամ ձեւացած որպէս հիւանդներ, խօսում էին իրանց հիւանդութիւնների մասին: Ա՜խ, որքա՜ն բազմատեսակ էին այդ հիւանդութիւնները, բարոյական հիւանդութիւն... մտաւորական հիւանդութիւն... հոգեկան հիւանդութիւն... երկրի անկարգութիւնից առաջացած տնտեսական հիւանդութիւն... բողո՜ք եւ բողո՜ք ամէն կողմից: Ամէն ոք դեղ ու դարման էր պահանջում: Բայց կարո՞ղ էր Ասլանը եւ այդ հիւանդութիւնների բժիշկը լինել: Նրա բժշկարանի մէջ կա՞ր արդեօք մի որեւիցէ դարման երկրի հասարակական փտութիւնը եւ անդամալուծութիւնը բուժելու համար: Այդ հարցերը վճռելու համար ես այն ժամանակ ոչ բաւական գիտութիւն ունէի եւ ոչ բաւական զարգացում: Բայց իբրեւ իսկական բժիշկ, Ասլանը, իրաւ որ, անգնահատելի էր:

Ասլանի դրութիւնը ես համեմատում էի մի շրջական կլայեկագործի հետ, որ, սովորաբար, մեծ զատիկը մօտենալու ժամանակ, թափառում է գիւղից գիւղ, ժանգոտած, փախրոտած պղնձեղէնները մաքրելու եւ կլայեկով պատելու համար: Գիւղացիները իրանց բոլոր պղնձէ ամանները թափում են նրա մօտ, որովհետեւ գիտեն, որ մի ամբողջ տարի նրա երեսը այլեւս տեսնելու չեն: Այսպէս թափում էին բժշկի մօտ քաղաքացիները իրանց հիւանդներին, մտածելով, որ նա երկար չպիտի մնայ իրանց մօտ, եւ շտապում էին նրա ներկայութիւնից օգուտ քաղել: Ասլանը, որպէս գործից անվաստակելի մարդ, չէր խնայամ ամէնին իր օգնութիւնը:

Կոկորդիս ցաւը բոլորովին անցել էր, մի քանի օրից յետոյ ինձ այնքան առողջ էի զգում, որ կարող էի տնից դուրս գալ: Բայց դրսում եւ մանաւանդ քաղաքում երեւնալու համար պատշաճաւոր հագուստ չունէի: Իմ հագուստը դեռ նոյնն էր, ինչ որ Մարօն, սուրբ աստուածածնի ուխտագնացութեան ժամանակ, մի կերպով կարկատեց ինձ համար: Բայց որքա՜ն մեծ եղաւ իմ ուրախութեանը, երբ իմացայ, որ Ասլանը վաղօրօք հոգացել էր այդ մասին, գնելով շուկայից ինձ համար ամենապատոսական հագուստներ: Ես իսկոյն հագնուեցայ, երբ Ասլանը յայտնեց, թէ դիտաւորութիւն ունի ինձ իր հետ տա-